

ւուշալ, անտի Սանահին յաջորդեաց, արգեամբ իւրով զայս օրինեացաւ:

Խողովակների փչանալու պատճառով ալս ջուրը երբեմն պղտորւում է և անպիտան համ ստանում:

VII.

ՍԱԿՆԱՀՆԻ ԿԱՄՈՒՀԻՌ ՃՀ

Գիւղից ցած, ձորի մէջ, ահուելի դղբդիւնով և փրփրալից ալիքներով սրնթաց վազող Դէրէտի կամ Զորագետի վրայ է ձգուած այն հորակապ, կտմարաձեւ և քարաշէն կամուրջը, որ իրեւ տալացուց մեր նախնեաց ճարտարապետական հըմառնեան, ալսօր ևս լուռ վկալ է իր տակովն անցնող ալիքների ողբաձալն մռնչիւնների.....

Սեօրդեաց ձորի ալս պատմական կամուրջը շինել է տաւել նանա այրի թագուհին՝ ի լիշտատակ իր վազաթառափ ամուսնու, Լոռու Արաս թագաւորի և Զաքարէ ու Խւանէ սպասալար եղբարյների:

Կամուրջի երկարութիւնն է 28 սաժէն, լայնութիւնը 5 արշին, կամարի բարձրութիւնը ջրի մտկերմոլթրց (մեր զիտած ժամանակը, ամառը) 19 արշին. շինուած է կամարների վրայ՝ որբատաշ քարերից. Կամուրջի մի ծալրը հաստատուած է ժայռի վրայ, իսկ միւս ծալրն ամուր որմի վրայ և գէպի հարաւ իջնում է աստիճաններով; Կամուրջի երկու կողմը գտնւում են չորս կոփածոյ քարից քանդակուած առիւծներ, որոնք ժամանակի ընթացքում բաւտականին մաշուել են:

Կամուրջի ներքեսի ծալրին կալ մի խաչքար՝ կամուրջը շինել տուող նանա թագուհու հրամանով կանգնեցրած: Խաչքարի վրայ արձանագրուած է հետեւեալը.

«Կամաւն Աստուծոյ ես նանա յազգէ Բագրատունեաց գուստը իշխանաց իշխան Սարգսի քոլը Զաքարէի և Խւանէի կին Արասայ թագաւորի որ կեսաւրեալ վախճանեալ է խա-

ւարեցոլց զմեզ. շինեցի զկամուրջս, կանգնեցի զխաչս լիշտակ նմա և ի միիթարութիւն ինձ և ի կեանս ծնողաց և եղբարց մերոց. լիշեցէք ի Քս. Յս. ։։

Խաչի ճակատը, որ ալժմ կոտրուած և վալր է ընկած, կրում է հետևեալ արձանագրութիւնը.

«Սուրբ տէրունական»:

VIII.

ՎԱՆՔԻ ՄՐՅՈՒԹԻՒՆՆՐԸ

Վանքի սրբութիւնները կամ սրբոց մասունքները պահում են սր. Նշան եկեղեցու խորաններից մէկում՝ տուանձին արկղի մէջ. այս պատկառելի աւանդներն եկեղեցու գլխաւոր հարստութիւնն են կազմում և վանքն աւելի նուիրական գարձնում ժողովրդի աչքում։ Մասունքներից մեծ մասը նուիրուած են զանազան անձերից վերջին գարերում. յայտնի է, որ հնումը սովորութիւն կար, որ նշանաւոր ընտանիքները կամ իշխանակուս տոհմերը մեծ գնով ձեռք էին բերում մի որևէ է սրբազն մասունք և պահում կամ թէ վերջը նուիրում իրենց մալրենի եկեղեցուն. այսպէս օրինակ Բագրատուննեաց արքայական տունն ունէր սր. Նշանի մասունքը, որ յետոյ Աշոտ Ողորմածի ամուսին Խոսրովանոյշը նուիրեց Հաղբատակ վանքին։ Վանքի նշանաւոր մասունքները հետևեալներն են.

1) Սր. Գրիգոր Լուսաւորչի աջը, որ շինուած է արծաթից և սոկեղրած. բութ և մատնեմատը իրար հետ ծալած են ձեռքի դաստակի վրայ և ալդպիսով սր. աջը խաղաղութիւն ասելու միջոցին բռնած գիրքն ունի։ Մատնեմատին հազցրած է մի կանաչ ակնով զարդարուած գեղեցիկ մատանի. բազուկի երկու ծալրերը շրջապատուած են ակնազարդ ապարանջաններով։ Սր. աջի վրայի զրուածքից երևում է, որ շինուել է ՌՃՂԴ հայոց թուին (1134—